

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ


Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե **9-10-րդ դասարաններ**

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Հինգ բաղաձայն ընկել էին **ող, ոչ, ոխ, ոճ, ոտ** բառերի հետևից: Տարբերակներից որի՞ն հաջողվեց «կպչել» բերված բոլոր բառերին ու «պոկ չգալ»:


Ա. հ Բ. բ Գ. պ Դ. ճ Ե. կ

2. Մեղվիկի փոխարեն ո՞ր տառերը հաջորդաբար տեղադրելով՝ կստանանք բառեր, որոնք նշանակում են համապատասխանաբար *դասատու, պետական պաշտոնյա, հոգևորական*: վար  ապետ

Ա. ժ, գ, դ Բ. կ, չ, դ Գ. չ, ժ, ձ Դ. գ, չ, ժ Ե. ժ, չ, դ

3. Ի՞նչ դարձվածք է գաղտնագրվել:

- Ա. Աշնանը տերևները թափվում են, ծառը մրսում է:
- Բ. Աշնան քամու պես փչել:
- Գ. Աշնան տերևի պես դողալ:
- Դ. Տերևներն աշնանն են հաշվում:
- Ե. Գարնանը շողալ, աշնանը դողալ:



4. Ո՞ր բառն է կազմվում **նավ** և **ծորակ** բառերի բոլոր տառերով:

Ա. վերձանում Բ. ծանրանալ Գ. ձերունական Դ. կարծրանալ Ե. ծովանկար

5. *Ծիծեռնակները պոկվում են վանքից, ճախրում մանկության ցնորքի վրա: Աչքերս քար են կտրում գարնանքից Այս գարնան շենք ու շնորհքի վրա:*


Տարբերակներից ո՞րն իր «ընկերը» չունի Հ. Սահյանի քառատողում:

Ա. երգել Բ. վեմ Գ. պատրանք Դ. ապշանք Ե. ձիք

6. **Նավակ, տնակ, իմաստակ, լեզվակ, գրչակ, վիպակ, թռչնակ, տեսակ, գնդակ, կոտորակ, առվակ, գետակ, ճաշակ, օրինակ** բառերից ամենաշատը քանիստ է **ակ**-ը նվաստական իմաստ արտահայտում:

Ա. 0 Բ. 1 Գ. 2 Դ. 3 Ե. 4

7. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:



Ա. սիրամարգ Բ. սրինգ Գ. սագ Դ. թագ Ե. գավաթ

8. Տարբերակներից որո՞ւմ ժամանակ ցույց տվող բառ թաքնված չէ:

Ա. միաժամանակ Բ. ցպահանջ Գ. համերաշխ
Դ. տարկետում Ե. դարավանդ

9. Տարբերակներից չորսը մի «ընտանիքից» են: Ո՞րն է «խորթը»:

Ա. բախել Բ. թաթախել Գ. ծախել Դ. կախել Ե. նավախել

10. *Ցանկապատի տակ*

*Ման եմ գալիս,
Ոսկի, արծաթ
Շաղ եմ տալիս: (ժողովրդական հանելուկ)*

Ա. ցող Բ. անբախտ վաճառական Գ. մշուշ
Դ. ասեղնագործ գլխարկ Ե. գետաքար

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Ո՞ր տարբերակի բոլոր «բառապատերը» կստացվեն առանց **ջրապատնեշ**-ը քանդելու:

Ա. շրջապատ, նետ Բ. շրջան, ապա, պետ Գ. արջ, տապ, շեն
Դ. ջրաշեն, տապար Ե. պատ, շատ, ջրեն

12. Ո՞վ է գաղտնագրված երկտողի հեղինակը:

*Այբիսենչրեայբնուինիվովեկենայբրեդակենգիմայբ
ումենայբրեդակենչրեթայբայբնուայբրեայբայբու:*

Ա. Ավ. Բասակյան Բ. Հ. Թումանյան Գ. Վ. Տերյան
Դ. Ե. Չարենց Ե. Հ. Սահյան


13. **Չրամագլուխ** բառում, ձախից աջ ուղղությամբ և առանց տառերը տեղաշարժելու, ամենաշատը քանի՞ հաջորդաբար գրված տարբեր բառեր կան, որոնք ունեն գույգ թվով տառեր և պահպանել են ուղիղ ձևը:

Ա. 10 Բ. 9 Գ. 7 Դ. 6 Ե. 4

14. Եթե **ախտոտում, ախտարար, ախտահարել, ախտաջուր, աղտաբան, ախտակալել, ախտարգել, աղտածին, ախտահանել, ախտեղություն** բառերից ջնջենք սխալ գրվածները, կստանանք բառեր, որոնք

- Ա. կազմում են հակառակ իմաստով բառազույգեր
- Բ. կազմում են մոտ իմաստով բառազույգեր
- Գ. դասավորված են այբբենական ճիշտ հաջորդականությամբ
- Դ. ունեն վանկերի միևնույն քանակը
- Ե. ունեն ձայնավորների միևնույն քանակը

15. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

կամուրջ - ջրամուկ
խորացնել - իւելացնոր
արմատական - 

Ա. մատակարար Բ. մարտական Գ. աննպատակ
Դ. նամակատար Ե. անարմատ

16. *Իր առջև դրված սննդարար հյութը գննելով՝ տպագրիչը մի շնչով ըմպեց այն:* Նախադասության մեջ ամենաշատը քանի՞ տառ է «կուլ գնացել»:

Ա. 0 Բ. 1 Գ. 2 Դ. 3 Ե. 4

17. Ո՞ր դարձվածքի իմաստն է ծածկագրվել բերված տառաշարքում:

փոր, ձվա, ծկ, անք, ունջ, ատու, շատ, բան, տես, անձ, այր

Ա. աշխարհ տեսած Բ. խոսքը ջուրը գցող Գ. ծնկի եկած
 Դ. կրակի հետ խաղացող Ե. մեկի աչքից ընկած

18. Աջ կողմում բերված է տառաթվային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Բերված տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառաթվային ծածկագրին:

ՔԱՄԻ
 +
 ՔԱՄԻ
 +
 ՔԱՄԻ

 ՍԱՄՈՒՄ

Ա. 9578	Բ. 8645	Գ. 8679	Դ. 8579	Ե. 5724
+	+	+	+	+
9578	8645	8679	8579	5724
+	+	+	+	+
<u>9578</u>	<u>8645</u>	<u>8679</u>	<u>8579</u>	<u>5724</u>
28734	25935	26037	25737	17172

19. Մի երկտասարդ զինվորական երկաթուղային կայարանում մտնեցավ դպրոցական երեխային: Ամենաշատը քանի՞ մարդ կա նախադասության մեջ:

Ա. 2 Բ. 3 Գ. 4 Դ. 5 Ե. 6

20. Ի՞նչ օրինաչափությամբ է կազմված տառաշարք:

Խ, Ջ, Ճ, Զ, Ը, Ծ, Ս, Պ


Ա. ըստ տառերի թվային արժեքների
 Բ. ըստ տառերի այբուբենում ունեցած հերթական համարների
 Գ. ըստ տառանունների
 Դ. ըստ այբբենական կարգի
 Ե. ըստ բաղաձայնների տեսակների

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Հայոց այբուբենի այժմյան բոլոր տառանունները, բացի մեկից, ունեն մի ընդհանուր օրինաչափություն: Ի՞նչ օրինաչափության մասին է խոսքը և ո՞ր տառի անունը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

Ա. Օրինաչափությունը վերաբերում է տառանունների տառերի քանակին, տառը Է-ն է:
 Բ. Օրինաչափությունը վերաբերում է տառանունների սկզբնատառերին, տառը Մ-ն է:
 Գ. Օրինաչափությունը վերաբերում է տառանուններում բաղաձայնների քանակին, տառը Տ-ն է:
 Դ. Օրինաչափությունը վերաբերում է տառանունների գրության և արտասանության տարբերությանը, տառը Ե-ն է:
 Ե. Օրինաչափությունը վերաբերում է տառանունների վանկերի քանակին, տառը Ի-ն է:

22. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:


բերկրանք, քնապարկ, կրակաման, նամակ, կամք, քնահաճ, 

Ա. ճահիճ Բ. հաճելի Գ. մաճկալ Դ. հանճար Ե. ճենճահամ

23. Բարեկամ, կամկար, կարոտամաշ, մաշկաբան, բանջար բառաշարքի բառերը, բացի մեկից, մի օրինաչափությամբ կապված են իրար: Ո՞րն է այդ բառը:

Ա. բարեկամ Բ. կամկար Գ. կարոտամաշ Դ. մաշկաբան Ե. բանջար

24. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

դերասան, անդամ, նայել, կայսր, այդպես, ,
սրածայր, անդրանիկ, անրակ

Ա. վայրագ Բ. համայն Գ. համեղ Դ. մշակել Ե. արդեն

25. Գայանեն որոշակի օրինաչափությամբ կազմեց **կուսանոց, ճնշում, շոգի, ջահելություն, տիրակալ** բառաշարքը: Արեգը բառաշարքում գտավ մեկ այլ օրինաչափություն և շարունակեց բառաշարքը՝ պահպանելով երկու օրինաչափությունները: Տարբերակներից ո՞րը գրեց Արեգը:






Ա. ցերեկ Բ. քսան Գ. փարախ Դ. քանոն Ե. փորակ

26. Մոզական քառակուսու յուրաքանչյուր տողում, յուրաքանչյուր սյունակում և անկյունագծերից յուրաքանչյուրում գրված թվերի գումարները հավասար են: «Դու՛ դպրոցում» աղյուսակի մեջ ո՞ր երկու բառերի տեղերը պետք է փոխել, որ աղյուսակը դառնա մոզական քառակուսի:

դու	գրատախտակ	կարկին
դասարան	դպրոց	սան
գրիչ	և	ուսուցչուհի

Ա. դու, և Բ. դասարան, ուսուցչուհի Գ. դպրոց, սան Դ. գրիչ, կարկին Ե. դու, սան

27. Ի՞նչ թիվ է թաքցրել մեղվիկը:













 տուն - 4 տունսավաճառ - 4	 դաս - 3 դասարան - 3	 կարագ - 5 կարագաման - 4	 դրամ - 4 դրամագլուխ - 
---	--	--	--

Ա. 10 Բ. 6 Գ. 5 Դ. 4 Ե. 3

28. Կոտորակագիր կոչվող ծածկագրում մեր այբուբենի յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ կոտորակ, որի համարիչում և հայտարարում դրված կետերը որոշակի կապ ունեն տվյալ տառի հետ: Օրինակ՝


$\text{Վ} = 3000 = \frac{\text{●●●}}{\text{●●●●}}, \text{Թ} = 9 = \frac{\text{●●●}}{\text{●}}, \text{Մ} = 200 = \frac{\text{●●}}{\text{●●●}}$

Ի՞նչ դարձվածք է գաղտնագրվել բերված կոտորակագրում:

											
---	---	---	---	---	---	---	---	---	---	---	---


Ա. քիթը վեր ցցել Բ. վիզը ծուռ մնալ Գ. սիրտը բաց լինել
 Դ. քիթը կախ մնալ Ե. տասը կտոր լինել

29. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

հունագետ, փետուր, մարզպետ, սպորտստ, մայթեզր, 

Ա. հունդ Բ. մատիտ Գ. աղվամագ Դ. փողոց Ե. հոսանք

30. Ի՞նչ տառ է թաքցրել մեղվիկը:

ա, բ, դ, ը, հ, 

Ա. յ Բ. շ Գ. ց Դ. փ Ե. ր